




Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
կիսանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ղանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործութեւ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎԱՅԱՐՈՒՄՆԵՐ	ԲՆՐԱՆ	(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
		(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
	ԿԱԼԱԹԱ	(1. Սինկեր խան, Թիւնէլի հտեւը.
		(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
	ՊՈԼԻՍ	(1. Սուլթան համամ .
		(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .
	ՍԿԻՏԱՐ	Զարչը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր զաւառներու թուր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւղօղլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 39

ՇԱՐԱԹ

26 ՄԱՅԻՍ 1907

ԱՆՁՆԱՍՊԱՆԻՆ ՊԱՏԻԻԸ

ՃՇՄԱՐԻՏ ԽՕՍՔԵՐ

— ՃԼԺԺ... Բ... —

Գիշերուան մռայլին ու խոր լռու-
թեան մէջ, ութը գրկաչափ խոր հորի
մը յատակը տեղի ունեցած այս սարս-
ռազդեցիկ ձայնը, անցեալ չաբթու
ամենուս ականջը հասաւ :

Իր բազմամեայ գործառնութեանց,
ուղղութեան, պատիւը ընտանիքին և
զաւակներուն սէրէն բարձր բռնող amour
propreի զոհ մը եղաւ մուպահեաճի Սի-
մօն Էֆէնտի :

Ամէնուն սիրելին, ամէնէն յար-
գուած տիպար այդ անձնաւորութիւնը
չի կրնալով փոխել իր ընթացքը, այս-
ինքն ուղղամտութենէն չեղելով կեղ-
ծիքի և խաբէութեան հոսանքին տալ

ինքզինքը, նախամեծար սեպեց վերջ
տալ իր կեանքին, փոխանակ ստոր
սնանկի մը անունը պտըտցնելու իր
անբիծ ճակտին վրայ, բան մը որ շատ
հեռու էր արդարեւ իրմէն :

Սիմօն Էֆէնտին մօտէն ճանչցողներ
կը հաւաստեն այսօր, թէ ինքը ի վի-
ճակի էր շարունակելու իր գործը,
թէ անձնասպանութեան դիմելու չափ
զօրաւորագոյն պատճառ մը չունէր,
թէ ճշմարիտ բարեկամներ կրնային
զինքը վեր առնել այդ վիճակէն, թէ
իր կարգ մը պահանջները լի ու լի կը
բաւէին գործը իր նախկին վիճակին
բերելու, թէ իր հեղահամբոյր և պար-
տաճանաչ սկզբունքին շնորհիւ՝ շատեր

կրնային ձեռք տալ իրեն, օգնել ու հասնիլ իր անձկութեան մէջ ելն. ելն.:

Բայց ինչո՞ւ այս բոլոր փրկարար առաւելութիւնները գիտնալով հանդերձ խեղճ մարդը վերջ տուաւ կեանքին...: Ինչո՞ւ:

Անձնիւր գիտակցութիւն ունեցող և պատիւը իր եսէն շատ վեր բռնող անհատի մը համար, շատ ու շատ դժուար է արդարեւ յայտնել վիճակ մը որ չի յուսար դէմինը: Աւելի որոշ խօսելով, իր կոկիկ գործը և անոր փայլուն ընթացքը տարիներ ու տարիներ վայելելով, մէկը շատ դժուար կրնայ համոզուիլ, իր ձախորդ գործառնութեան չուզէր հաւատալ, ինքն իր մէջը լուծել կը ջանայ, ուղղել յարդարել այդ անակնկալ պատահարները և առանց մէկու մը յայտնելու կ'աշխատի, կը ջանայ, կը տքնի ծածկել և երբէք չի յայտնել նոյն իսկ իր ընտանիքին, իր զաւակներուն:

Ահա նոյն այդ կացութեան մէջ էր ողբացեալ՝ յուսահատը Սիմօն Էֆէնտի:

Ատենէ մը ի վեր մին միւսը հալածող կարգ մը առեւտրական ձախողութեանքներ այնքան շուտ՝ այնքան անակնկալ կերպով ծանրացան իր վրայ, որոնց հանդէպ տկար զգաց ինքզինքը, մաքառելու՝ աւելին յաղթելու համար այդ առեւտուրի փոթորիկներուն, մէկու մըն ալ սիրտ չի բացաւ, յուսաց տեսնել ջինջ երկինքը վերստին, մտածեց՝ լուռ պայքար մը մղել կեանքին և պատիւին դէմ: Բայց... ինչպէս վերը յիշեցինք, սեւ ամպերը չի փարտեցան իր անել գործառնութեանց հորիզոնին վրայէն, տակաւ մթնցաւ իր բազմազգաղ միտքը, և վերջապէս իր սեւ խորհուրդը ի գործ դրաւ դարձ-

եալ ի պատիւ իր անունին, ի պատիւ իր ընտանիքին և որ աւելին է ի պատիւ ՈՒՂՂԱՄՏՈՒԹԵԱՆ:

Սիմօն Էֆէնտի Մուպահեանի, իր այս սրտակեղէք անձնասպանութեամբ մեծ դաս մը կուտայ ամէն անոնց, որոնք խաբէութեամբ, չինժու ձեւաբանութիւններով և նոյն իսկ ուրիշները փճացնելով կուզեն փրկել իրենց ձախողութեանը, իրենց խաբուող դիրքը, ուրիշներու ֆրաս տալով ամրացնել կ'աշխատին և կամ կը մտածեն:

Կորուստը որչափ ցաւալի, նոյնչափ ալ բարի օրինակ կրնայ համարուիլ, եթէ այս վերջին բացատրութիւնը քիչ մը Էկօիսթ չի թուիր:

Սիմօն Էֆէնտի իր անձնասպանութեամբ անմուանալի և անջնջելի օրինակ մը կուտայ վաճառականին, սեղանաւորին և ամէն անոնց որոնք առեւտուրով կը զբաղին:

Պատիւով սկսիլ ո՞ր է գործ, ուղղամտութեամբ շարունակել զայն, դիմադրել, մաքառիլ բոլոր առեւտրական անակնկալ ձախողութիւններու դէմ, եւ... Էն անել եւ անդամանելի կացութեան յաղթելու համար, փոխանակ ուրիշ տուներ փլցնելու, ուրիշին ընտանիք կործանելու, ուրիշին դրամը վնասելու, ՎՆԱՍԵԼ ԻՐ ԱՆՁԻՆ:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԶՈՐԻ ԹԻԻՈՎ

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Եղանակին հ'ն mondain նիւթը

Վ Ի Ճ Ա Կ

ԼԻԼԱ

ԻՆՉՈՒ ԿԱՄՈՒՍՆԱՆԱՆ

Ա. Օրբորդ Մ. Ս.

— Մարդիկ ինչո՞ւ կամուսնանան, հարցուցիք ինձի՝ երկու գաւաթ թէյի միջեւ և ամուսնութեան վրայ դարձած խօսակցութեան մը միջոցին։

— Տեսնելու համար թէ երկու հոգի մէկ բարձի վրայ ծերանալով որքան կազոտեն... բարձին երեսը, պատասխանեցի ձեզի, եթէ չեմ սխալիր։

Եւ պիտի շարունակէի խօսակցութիւնս, բնականաբար, եթէ տիկին ձեր մայրը չի հազար և ժամացոյցը չըսէր թէ անպատշաճ պիտի ըլլար երկարել այցելութիւնս որուն նըպատակը ապահովապէս բարքերու ուսումնասիրութիւնն էր ընել չէր, նոյն իսկ ձեզի պէս նազելի աղջկան մը հետ։

— Դոնէ գրէ՛, հրամայեցիք ինձի ձեր ձեռքը սեղմած պահուս։

Արդէն պատրաստ նիւթ մը գտած ըլլալու գոհունակութիւնս՝ ձեր մէկ փափաքը կարենալ լրացնելու հաճոյքին խառնուած, կը մըղեն զիս ներկայ յօդուածս գրելու և ձօնելու այս ողորմելի տողերը ձեզի պէս գեղանի և խելանի օրիորդի մը։

Արդ՝ կուզէք գիտնալ թէ ինչո՞ւ մարդիկ կամուսնանան։

Ամէն բանէ առաջ, ոտքի վրայ մի՛ կենաք, խնդրեմ, պատասխանս կրնայ երկարիլ, ուստի հաճեցե՛ք եւ բազմեցա՛րուք։

Ահաւասիկ յանձնարարութիւն մը ձեզի՝ զոր կատարելու համար ոչ ձերմակ չըջագեատի պէտք ունիք և ոչ ալ նարնջների ծաղիկներու... թէեւ առանց ասոնց ալ կարելի է համակերպիլ Աստուածային պատուէրին։

Մարդիկ կը կարգուին, օրիորդ, ինչպէս ուխտի կերթան, ինչպէս հագուստ կը զնեն, ինչպէս կը գինովան, ինչպէս կը հիւանդանան և ինչպէս կը մեռնին։ Առողջապահութեան, հանգստութեան, շահու, սովորութեան խնդիր մըն է այդ իրենց համար որուն մէջ ոչ սիրտը դեր ունի և ոչ հոգին։

Ուրիշ ազգերու մէջ երիտասարդ մը աղջիկ կը սիրէ և ետքէն հետը կամուսնանայ։

Մեր մէջ նախ կը կարգուին և յետոյ կսպասեն որ պաակը սեւ բերէ, ինչ որ շատ անգամ կը մոռնայ բերելու։

Մեր մէջ սիրոյ համար ամուսնացողները այնքան քիչ են՝ որքան սիրոյ համար մեռնողները։

Կզգամ թէ՛ ձեզի պէս Պուրծէի, Բրէժօի և Մարկրիթի սկզբունքներով մեծցող և անոնց դեղին հատորներուն վրայ աչքի լոյս թափող էակներ չպիտի հաւատան ըսածներուն և պիտի կարծեն թէ պարզ Ֆանքիգի մըն է որ կը գրեմ ասանկ ընկերական մեծ խնդրի մը վրայ ինչպէս է ամուսնութիւնը։ Եւ սակայն ճշմարտութիւն մը անհերթելի ըլլալուն համար՝ ճշմարտութիւն մը ըլլալէ չի գաղբիր։

Մէկ խօսքով, օրիորդ, ձեր կնիքադրած կամ աւելի ճիշտ է ըսել ձեր երազած կերպով չէ որ ամուսնութիւնները կը կատարուին մեր մէջ, ընդհակառակը, կը հաւատա՛ք արդեօք, եթէ ըսեմ թէ ձեր և իմ գիտցած սէրը մեր մեծագոյն մասին համար անծանօթ զգացում մըն է որ ո՛չ զգացած ունին և ոչ ալ կրնան զգալ։ Անոնց համար սեւ է երբ ամուսին մը իր կնկանը փոխանակ երկու չըջագեատ չխելու և կամ երկու գլխարկ առնելու վեց չըջագեատ կը չինէ տարին և չորս գլխարկ։

Բարիդէն sortie de bal մը և կամ Բրէն-Թանէն մէկ երկոտանեակ թաշկինակ բերել տուող մարդու մը համար՝

— Կնկանը վրայ կը խենդենայ կոր, կըսէ զոքանջը, և

— Ալլըման էրիկ մըն է կըսեն մնացեալները։

Կը հասկնամ թէ ուրիշ ազգերու մէջ ալ առանց սիրոյ ամուսնութիւններ կը կատարուին, բայց գոնէ երեւոյթները փրկելու եղանակ մը ունին որ ինքնին շատ բան ըսել է արդէն։

Տասնրութէն քսան երկու տարեկան աղջիկներ և քսան հինգէն երեսուն տարու մանչեր չգիտնան թէ ինչ է սէրը, չզգան անոր ամբողջ անուշութիւնը և կարգուին, որովհետեւ աղապամ ասանկ կուզէ կոր, ասիկայ խաւարեալ, հին աւուրց բան չէ՛, ըսէք։

— Ծօ՛ Գիրգոր, սանկ քեզի ըռնտիկ հարս մը գտնեմ նէ, չէ՛ չեա ըսեր, եա՛ :

— Տուտու, քանա վախիքը չէ :

— Ճանրմ, անանկ ալ երկու քիւրլի կերակուր կեփի կոր անանկ ալ, չորսին կերածը հինգ հոգի ալ կուտէ :

Եւ տղան կը կարգեն, որովհետեւ կէս օ- խայ միսը հինգ հոգիի ալ կը բաւէ եղեր :

Տեսա՞ք, օրիորդ, ինչ սկզբունքի վրայ հիմնուած է ամուսնութիւնը մեր մէջ :

Ինչ կուզեն թող ըսեն, ես կը պնդեմ թէ ուրիշ ազգերու մէջ ամուսնութիւնը սրտի խնդիր է, իսկ մերիններուն համար . . . ստա- մոքսի :

Տարբեր տեսակէտներով ամուսնացողներ ալ կան, ամէնէն հետաքրքրականները թե- րեւս :

— Պարոն Ալիքսան, իմացայ որ նշան- ուեր ես, իրա՞ւ է :

— Էյ, Աստուած ուզէ նէ ատանկ միտք մը ունիմ, հիսապ ըրի քի ախպարս չի կար- գուիւր կոր, ես ալ չի կարգուիմ նէ Ֆամիլ- եաին անունը պարմիւ պիտի ըլլայ :

Եկուր մի խնդար, եթէ կրնաս, միամիտ- ները :

Ասոնք կը կարծեն թէ աշխարհք՝ աշխարհք ըլլալէ կը դադրի եթէ Կիրակոսեան մը, Մար- տիրոսեան մը եւ կամ Բազաճեան մը պակաս ըլլայ երկրագնդի երեսէն :

Անդին ուրիշներ ալ կան նուազ ապուշ- ները, որ Հիմէնի առագաստը կը մնան, en pleine voile ճամբարդութիւն մը ընելու համար ամուսնական ծովուն վրայ, որ Ման- չի ծովուն պէս միշտ ալեկոծեալ է, աւա՛ղ :

Գալով դրամի համար կարգուողներուն, օ՛հ, ասոնց վրայ այնքան բան կայ ըսուելիք որ մասնաւոր յօդուածի մը նիւթ ընելու թոյլտուութիւնը պիտի խնդրեմ ձեռնէ, թոյլ- տուութիւն մը՝ որ ինծի չնորհած ըլլալուդ համար բան մը չէք վտանգեր, խօսք կու- տամ ձեզի :

Ինչպէս կը տեսնէք, գեղանի բարեկա- մուհիս, մեր մէջ տեղի ունեցած ամուսնու- թիւնները բնաւ չեն նմանիր այն ամուսնու- թիւններուն՝ որոնց նկարագրութիւնը ձեր բերնին ջուրերը վազցնել կուտայ՝ երեք ֆը- րանք յիսունոց հատորի մը էջերուն վրայ :

Ներկեցէք, օրիորդ, եթէ իմ յոռետես տո- ղերով կ'սպաննեմ ձեր մէջը ձեր իտէալնե- րուն ամէնէն վարդադոյնը եւ ամէնէն թոյ- լատրելին ու ներելին ձեր օրինական հետա- քրքրութիւններուն :

Ի՞նչ տգեղ կացութեան մէջ դրիք զիս, գիտէ՞ք :

Ես կերեւակայեմ թէ այս յօդուածս կար- դալէ վերջ, նողկանքի պէս բան մը պիտի գգաք ամուսնութեան հանդէպ եւ յուսահատ չարժուամով մը :

— Ա՛ս է եղեր, պիտի բացագանչէք ձեր ննջասենեակի առանձնութեան մէջ :

Յանցանքը իմա չէ :

Ուղեցիք որ դրեմ, առանց ձեր մտքէն անցնելու թէ խղճամիտ գրագէտ մը պար- տաւոր է միշտ ճշմարտութիւնը մէջ տեղ դնել եւ չիտակը զրուցել իր գրածին մէջ, պայմանաւ որ գրածը . . . երեսուն եւ մէկ օրէն վճարելի պարտամուրհակ մը չըլլայ :

Չարածճի հետաքրքրութեամբ մը ուղե- ցիք վերահասու ըլլալ եղիցին երկո՞ւսն ի մարմին միի գաղանթին եւ հիմա որ մերկ, անողոր ճշմարտութիւնը ձեր աչքին առջեւ կը դնեմ, կը զղջաք այդ հարցումը ինծի ը- րած ըլլալուդ եւ գուցէ պզտիկ ատելութիւն մըն ալ սնուցանէք ձեր կուրծքին տակ այս տողերը արտադրողին նկատմամբ :

Մերկապարանոց ճշմարտութիւնները միշտ հաճելի չեն կրնար ըլլալ մերկապարանոց կի- ներու պէս, գիտեմ. ասիկայ, եւ անա ինչու կը ներեմ ձեզի եթէ պտըտիկ ռիս մըն ալ կը պահէք ինծի դէմ :

Առաջին անգամը չէ արդէն որ այսպէս գէշ վարձատրուած եմ ճշմարտութիւն մը ը- սած ըլլալուս համար :

Ասկէց քանի մը տարիներ առաջ, պարա- հանդէսի մը մէջ, իր գեղեցկութեամբը նշա- նաւոր Տիկին մը, իր սպաննող աչերուն եւ յիմարեցնող ուսերուն ամբողջ հմայքը կը պտըտցնէր սրահին մէկ ծայրէն՝ միւսը :

Չի կրցայ ես զիս զսպել եւ միջոց մը իր քովը մօտենալով, հաւատացեալի մը երկիւ- ղածութեամբ՝

— Աս որքա՞ն աղւորցեր էք այս գիշեր, մրմնջեցի ականջն ի վար :

— Հայտե գնա՛յ զեվզեկ . . . :

Ասկէց աւելի գէշ կերպով վարձատրուած է երբէք ճշմարտախօսութիւն մը:

Ասիկայ դաս մը եղած է ինծի և անկէց ի վեր ընթացքս բոլորովին փոխած եմ:

Հիմա եթէ տեղ մը, մահացու մեղքի մը պէս տգեղ կնկան մը հանդիպիմ, նոյն իսկ եթէ այդ կինը բերաններուն ամէնէն մեծը, աչքերուն ամէնէն պղտիկը, շրթներուն ամէնէն թանձրը, և բարոյականներուն ամէնէն թեթեւը, ճակատներուն ամէնէն ցցուածը, հասակներուն ամէնէն կարճը, ձայներուն ամէնէն հասար և կուրծքերուն ամէնէն տափակը ունենայ մի եւ նոյն ատեն, հրճուանօք կը մօտենամ իրեն և՛

— Զիս կը մեռցնէք կոր ըսելու չեմ քաշուիր:

— Շատ աղնիւ էք, Պարոն, կը պատասխանէ ինծի և այդ առթիւ ցոյց կուտայ դեղնած, մաշուած շարքը իր ականներուն. որ բնաւ տարբերութիւն չունին մեզաթէ ծախու առնուած հին դաշնակի մը թափթփած ասեղնաշարին ոսկորէ մատներուն:

«Շատ աղնիւ էք» ... et ta soeur? —

Կատակը մէկ կողմ, օրիորդ, ջերմապէս կը յանձնարարեմ ձեզի, մեր մէջ կատարուած ամուսնութիւններու մէջ չի փնտռել ո՛չ «քոյր հոգիներու» լծորդութիւնը, ո՛չ իտէալի մը իրականացումը և ոչ իսկ ստուերը՝ ամենալետին բանաստեղծութեան:

Կրնայ պատահիլ որ — և ասիկայ չպիտի զարմացնէ զիս — նոյն իսկ դուք, հակառակ ձեր բարձր ձկնուսներուն, հակառակ ձեր արտայայտած այնքան վսեմ և աղնիւ զգացումներուն, դուք ալ օրին մէկը, մէկ կողմ դնելով ձեր մտածելու եղանակը, և դադրելով ըստէ ինչ որ եղած ըլլալ կը կարծէիք, ամէն աղջիկներու նման, դուք ալ ձեր ձեռքը դնէք առաջին անգամ ձեր գէմը ելլողին ափին մէջ և մեծ, հանդիսաւոր «այո»ն արտասանէք երբ ձեր սիրտը «ո՛չ» ըսել կը խրատէ ձեզի:

[Մնացեալը յաջորդ թիւով]

Յ. Ա. Լ. ՓԻԱՐ

ԱՆՄԱՋ ԱՆՈՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յաւէտ ողբացեալ մեծահոգակ Ուսուցչապետ-Գրագէտ և անուանի Փիլիսոփայ-Բանաստեղծ Ռ. Յ. Պէրպէրեանի դառն ու անդառնալի կորուստին առթիւ բազմաթիւ կարող գրիչներ և պերճախօս բերաններ թէև շատ ու շատ բաներ գրեցին ու խօսեցան, կատարելապէս պատկերացնելով Մեծ-Դաստիարակ-Ուսուցչապետին բեղուն ու զեղուն կեանքն ու կանգուն մնայուն գործը, սակայն թող ներուի մեզ՝ իբր խառնաշփոթ մեծ զաւակ և ամենախոնարհն ու յետինն Ուսուցչապետին լէգէոնաւոր հիացողներէն, որ մեր տկար գրչով քանի մը խօսք ընել և Մեծ-Հանգուցեալին հետ մեր ունեցած անձնական տեսակցութեան մէկ դրուագը նոթագրել փորձուինք հոս, դիտել տալու համար այն հայրական գուրգուրոտ վերաբերումը և հոգածութիւնն ու սէրը, զոր կը տածէր մեծահամբաւն Պէրպէրեան՝ իր անսահման կրթասիրութեամբ և ամբաւ բարութեամբ, նա՛ն իր բարեհամբաւ կրթական յարկէն տարբեր օտար ուսումնական յարկերու աշակերտող ուսանողներու հանդէպ:

1900ին էր, երբ դեռ Կալաթա-Սէրայի կայս. Լիսէն կ'ուսանէինք, թերթերէն տեղեկացանք թէ՛ Բերայի Արհեստանոցի սրահը Լսարանի պիտի վերածուի՝ մի միայն Կիրակի օրերն, և Ուսումնական Խորհրդոյ անդամներ և փորձ ու կարող ուսուցիչներ՝ փոխն ի փոխ ամէն շաբթու մանկավարժական բանախօսութիւններ պիտի արտասանեն նորահաս ուսուցչաց և այդ ասպարէզին ընտրելի, թեկնածու անձերու ներկայութեան:

Հետաքրքրուեցանք, և մի քանի ուսումնասանջ ու կրթասէր դասակիցներու և ընկերներու հետ փափաքեցանք ներկայ գտնուելով օգտուել այդ դասերէն, մանաւանդ որ Պէրպէրեան էֆէնտիի անունն ալ կար բանախօսներու ցանկին մէջ:

Մեր մտադրութիւնն ու բաղձանքը հազորդած ըլլալով Լիսէի մեր Հայերէնի համբաւաւոր ուսուցիչ Թովմաս Էֆ. Թէրզեանի՝

ի՛նքն ալ նշանաւոր գրագէտ և զգայուն բանաստեղծ ու ընկերաբան-փիլիսոփայ՝ ողբացեալ Ուսուցչապետին պէս՝ և հիացող մը անոր գործին ու տաղանդին, գոհութեամբ յանձնարարեց մեզ ուշադրութեամբ հետևել յիշեալ՝ և ի մասնաւորի Պէրպէրեան էֆէնտիի դասախօսութեանց:

Պատճա՛ռ մ'աւելի եւս ուրեմն այս թեւադրիչ պարագան, մեր խանդավառ զգացմանց՝ ու մտածմանց թիւն ու թափ տուող: Տեսնե՛լ բեմին վրայ հանրահռչակ Պէրպէրեանը՝ զոր հազիւ թէ կը ճանչնայինք անձամբ, լսե՛լ իր կենդանի բերնէ՛ն իսկ այն հմայիչ ու առինքնող խօսքերը, որոնք՝ ղեռ դպրոցական հաւաքածուներու, լրագիրներու կամ հանդէսներու մէջ միայն առիթ ունեցեր էինք յափշտակութեամբ կարդալու, լափելու, հրապուրուել անոր հռետորական շարժումներէն՝ ի՛նչ մեծ բարեբաղդութիւն, ի՛նչ ճշմարիտ վայելք անդուգական, մեր վառ երեւակայութիւնը գրգռող, մեր ուսանողի փառասիրութիւնը գգուող:

Հոգեբանութեան վրայ պիտի ճառէր այն օրը մեծանուն ու սիրեցեալ հեղեբան-վարպետը:

Գրասեղանի մ'անկիւնը սմբած, 2-3 ընկերներ, հիացիկ, անմրմունջ ու սրտատրոփ կ'ունկնդրէինք պերճաբարբառ ատենաբանին, որ մին քան զմիւսն գերազանց, խանդավառ, ու անման փաստերով, բացատրութիւններով և սահուն ու հմայիչ լեզուով կը յայտնէր, կը պարզէր, կը հաստատէր իր զգացումները, իր համոզումները, իր հմտալից գաղափարները:

Գեղեցկին, բարւոյն, ճշմարտին գեղադէմ, բարեսիրտ ու ճշմարտախօս առաքեալն ու աւանդապահն իր դերին, իր դիրքին, իր քեզին մէջն էր արդարեւ:

Իր մեղրածորան չրթունքէն կախուած, կախակայուած, կախարդուած էր կարծես ամէն ոք. իր անուշ ու դիւթող, դիւթող ձայնը և առանց ջանքի ու ճիգի ծորող, իր բերնէն յորդող, պոռթկացող բառերը, պարբերութիւններն ու նախադասութիւնները մեր վրայ կը թողուին տպաւորութիւնը մեղմահոս ու խոխոջածայն, վճիտ առուակի մը, որ

կարծես հեղասահ կ'ընթանար դալարաւետ մարգաց ու կանանչազարդ ծառոց մէջտեղէն:

Երիտասարդական խանդ ու աւելնով կը խօսէր, ձեռքի ու գլխու նշանակալից տատանումներով և գունագեղ, նկարագեղ, պատկերալից ոճով մը կ'արտայայտէր իր միտքն ու գաղափարները, դիւթելով, հմայելով ու մոգելով իր ասլած ու ծխացած ունկըղիքները:

Ա՛լ ամէն կիրակի որոշեր էինք երթալ լսարան՝ Պէրպէրեանի խօսած օրերը մանաւանդ, այնպէս որ շատ հեղ մեր շարաթական հանգիստն իսկ մոռնալով, և հազիւ քաշի մը ժամ զոհելով մեր ծնողաց տեսութեան, կը փութայինք, կը վազէինք Բերայ, Ս. Երսրղութեան եկեղեցւոյ բակը, ուր երբեմն մէ՛կ, երկո՛ւ ժամ սպասելէ վերջ հազիւ կը տեսնէինք Արհեստանոցի սրահին բացումը, որուն առջևն կեցած էինք ժամ առաջ ներս մտնելու տենջով ու տենդով:

Ամէն անգամ իր բանախօսութիւնն աւարտելուն, համակրական ընդհանուր խանդավառ ցոյցերու առարկայ կը դառնար պայծառադէմ ու ժպտուն Պէրպէրեան, ներբողական գնահատութիւններ, շնորհաւորութիւններ կը տեղային ամէն կողմէ:

Կ'ուզէինք մօտենալ, բա՛ռ մըն ալ մենք կակաղել, շնորհակալութեան անկեղծ ու սրբտաղին մրմունջ մ'արտայայտել հանճարեղ գրագէտին ու հոգեբան-փիլիսոփային, որ այնքան սքանչելի, գողտրիկ՝ գրական ու հոգեկան վայելք մ'ըմբռնեմք տուած, գեղեցկին, բարւոյն, ճշմարտին երբեակ և մի բռնութեամբը տողորած, գմայլեցուցած էր մեր միտքերն ու սիրտերը:

Բայց չէինք համարձակիր քո՛վն երթալ, կը վարանէինք զինք չըջապատող հիացիկ բաղմութիւնը ճեղքելով իրեն մօտենալու:

Սակայն Ուսուցչապետն ամէն անգամ մեզ ներկայ տեսնելով իր դասերուն՝ քանի որ շուտ աչքի կը զարնէինք մեր համադգեստին պատճառաւ, և մեր վարանումը տեսնելով իր վառվռուն ու մի՛շտ արթուն, ճալրտուն աչքերով օր մը նշանակալից կերպով մեզ դիտելէ և կարծես մեր հոգիներուն խորը քննելէ, պրպտելէ, հետախուզելէ յետոյ, ինքնաբերաբար մօտեցաւ

մեզ և վայրկենաբար իր հոգեբան իմաստասերի սուր իմացականութեամբ կարգալով, վերլուծելով, հասկնալով գողցես մեր ուսման փափաքը՝ հարցաքննեց, խրախուսեց ու քաջալերեց զմեզ, գովելով Պետական վարժարանի մը մէջ իսկ, շնորհիւ Վեհ. Կայսեր, մայրենի լեզուի ուսման ու զարգանալուն մասին՝ մեր ցոյց տուած նախանձախնդրութիւնը, սէրն ու փափաքը:

Ամէնէն սիրուած ու փնտռուած և օտարազգիներէն իսկ յարգուած, պատուուած այսպիսի անզուգական Դաստիարակի մը, աննշման կրթիչի մը դառնալէտ, անակնկալ ու ցնցող մահն ինչպէս ուրեմն անկեղծ սուգի ու արտասուքի մէջ չթողու համայն ազգն ընդհանրապէս և իր ծննդավայր Խասգիւղի հին ու նոր բնակիչները մասնաւորապէս՝ որոնց անկեղծ զգացումներուն թարգման հանգիստանալ կը համարձակի և հոգւոյն հոնգիստ հայցելով՝ իր խորին յարգանքն ու անկեղծ հիացումը կը ձօնէ անմահ Ուսուցչապետին լուսաւոր ու խնկելի յիշատակին որ, իցիւ, հետեւելի, անմեռ ու անմոռանալի ուղի մը, առաջնորդ մ'ու սեւեռակէտմ'ըլլալ կը մաղթէ՝

Պէրպէրեանի խոնարհ-հոգւոյն
հիացողներէն՝

ԼԵՒՈՆ ՄԻՋՐԱՆԵԱՆ

10/23 Մայիս 1907

Խասգիւղ.

ԼԵՒՈՆ ԱՒԱԳԵԱՆ PEINTRE DOREUR

Դոհացում տալու համար իր բազմաթիւ յաճախորդներուն, այս անգամ մասնաւոր atelier մը հաստատած է Պահլէ-գարու, Եէնի խան, Մաքսին մօտ, ուր կ'ըրաղի ամէն տեսակ իւղաների թապէլաներու, ոսկեզոծման, տեսակ տեսակ գծագրական գործերու պատրաստութեամբ:

ԱՐԱԳ, ԱԺԱՆ և ԽՆԱՄՈՏ

Տիրացուական

ԽՕՍԲԵՐՈՒ ՏԱՐԱՓ ԱՒՈՒՐ ՊԱՏՇԱՃԻ ՄԻԱՅՆ ՈՒՋՈՂԸ ԹՈՂ ԿԱՐԴԱԼ ՀԱՃԻ

Տիրացու ու տիրացուութիւն, ահա աւուր պատշաճի խնդիր մը, որ այս օրերս հակայաքայլ յառաջդիմած է շնորհիւ . . . ձայնի, (ձայնին թիւը ըստ կամս), և ամէն գեղարուեստասէրներուն ուշը գրաւած, ու վերջապէս տիրացուութիւնը այսօր գացած և բաղմած է իրեն յատուկ աթոռը գեղարուեստական աշխարհին մէջ, ուր տեղ և որուն միայն վայելէ փառք պատիւ յաւիտեանքս յաւիտենից ամէն:

Իբր տիրացու՝ պատշաճ սեպեցինք այս պատշաճ առիթով մի քանի կենսական ու ամենակարեւորագոյն ծանօթութիւններ տալ թէ՛ ինչ է տիրացու ու տիրացուութիւն ըսուածը, այս ալ անոնց համար միայն՝ որոնք ինչ ընելին կամ ինչ ըրածին թերեւս նոյն իսկ չեն գիտեր:

Այսօր ամէն մարդ տիրացու եղաւ, երաժիշտ եղաւ, երաժիշտ դասատու եղաւ, եկեղեցատէր եղաւ, ձայնաւոր եղաւ, դպիր կամ մի դպիր եղաւ, երգիչ եղաւ, և զեռչառ մը բան եղաւ:

Այսօր երաժշտական ճաշակներ իրարու հետ կը մրցին, պաղ եղանակներէ շատեր կը մսին, եռաձայն երգեցողութիւններ իրար կը գերազանցեն, երաժիշտներ չեն գիտեր թէ՛ ինչպէս իրենց տաղանդները սանձեն, գովեստներ ու գնահատականներ կը լսես նոյն իսկ այն անձէն, որ խնձորը չէ կարող զանազանել տանձէն, ամէն տեղ տիրացուութիւն, ամէն տեղ եռաձայն, ջանքեր կը թափուի վեր բռնել անոր բիացան:

Այսօր ամէն մարդ ճանչցաւ տիրացուութեան գեղեցիկն ու վսեմը, առանց ոտք կոխած ըլլալու եկեղեցիին սեմը, ու կըսուի թէ՛ չը հասկցողն է միայն սեքսեմը:

Ու վերջապէս՝ (քանի որ շատ խօսիլը չեմ սիրեր) մէկ խօսքով, ահա ճաշակներու զարթում, տաղանդներու վերարժարծում, հաւատքի փթթում, հին ճաշակներու փրտտում, ու շղային եղողներուն մարելիք, և

ինձ ալ կը վիճակի իմ ջրացեալ ու ծովացեալ խելապատակովս ու տիրացուական բարձրաբերձ հմտութեամբս գծել սահմանը տիրացուին ու տիրացուութեան:

— Թէ ի՞նչպէս կ'ըլլայ տիրացուին ծագումը:

— Տիրացուն կը ծագի (իմա՛ կը ծնի) իր մօրմէն, ինչպէս ես դուն, ան ու տիրացու քսակեան ալովքն հանդերձ, սակայն տիրացուն իր ծագման ատեն ուր է որոշիչ նշան մը չունենար տիրացու մը եղած ըլլալուն, ասկէ կը հետեւի թէ՛ տիրացուն ծագում չունի:

— Ի՞նչպէս մարդ մ'է տիրացուն:

— Ինձ պէս, քեզի պէս, ու տիրացու Սմբատին պէս, կուտէ՛ երբ կուտ կունենայ, կը խմէ՛ երբ իրիկուն ըլլայ, եկեղեցի կերթայ, բաղնիք կերթայ, թատրոն կերթայ, նուագահանդէսներուն բնաւ կասկած մի ընել թէ իբր գեղարուեստի՛ անպատճառ հոն պիտի գտնես, հարմնիքի կերթայ, մեռելի կերթայ, և դեռ շատ տեղեր կերթայ՝ ուր տեղ շատ մարդիկ չեն կրնար երթալ, ամէն օր եկեղեցին շապիկ կը հագնի ու կը հանէ, իսկ տունը շաքաթը մէկ անգամ, ու վերջապէս. խօսքը կարճ կապելու համար՝ տիրացուն մարդ կ'ըլլայ, ու մարդը տիրացու:

— Ո՞վ տիրացու կրնայ ըլլալ:

— Ո՞վ որ տիրացու ըլլալ կուզէ:

— Տիրացուութիւնը ի՞նչպէս կ'ըլլայ:

— Ի տղայ տիոց ամէն օր եկեղեցի երթալով, կիրակի օրերը տէրպատկան նշխարն առնելով, լուսարարէն չախ լսելով, ժամկոչէն հայրոյանք լսելով, վարժապետէն ապտակ ուտելով, ու այսպէս ամբողջ Շարականը ու ժամասացութիւնները սորվելով:

— Քանի՞ տեսակ տիրացուութիւն կայ:

— Տիրացուութիւնը բազմատեսակ է, եկեղեցական տիրացուութիւն, գրական տիրացուութիւն, եռաձայնական տիրացուութիւն կամ գեղարուեստիութիւն և կամ երաժշտաձայնաղարգացեալութիւն, ու տիրացու խափալը տիրացուութիւն:

— Տիրացուութեան ձայնաւորութիւն ալ կըսո՞ւի:

— Առաջ կըսուէր, բայց հիմա հարկ չկայ

ըսել, քանի որ գեղեցիկ ձայնի պէտք չկայ, շնորհիւ երանելի եռացեալ եռաձայնին:

— Ինչ է տիրացուութեան նիւթական շահը:

— Ամէն միւսքեքի ամսագլխուն պատկառելի ամսագումար մը, որ կապեցնէ տիրացուն Միլանի եաղով ու Աթինայի պալով, յուղարկաւորութիւններէ, հարսանիքներէ ևն. տրուած գումարները, որոնք մինչեւ որ տիրացուին ձեռքը համին՝ այնչափ կը նիհարնան որ քերինին ոսկորնուն կը փակի, ու իւղի պէս կը հալին, և ուրիշ շատ անգամներ ալ՝ շատ շատ շնորհակալութիւններ ու ֆեքիցներ, տիրացուն կուտէ հարսանիքներուն գեքեքիլաւ, կիրակամուքներուն հեղաւ, մեծ պահքին սալմա և մայիսին տօլմա:

— Ինչ է բարոյական շահը տիրացուութեան:

— Զգացումներդ կը սրբանան, կիրքերդ կարգարանան, բարկութիւնդ կը մեղմանայ, լեզուդ կը մեղմանայ, բնաւորութիւնդ կը կակղանայ, հաւատքդ կը զօրանայ, երեւակայութիւնդ կը ցոլանայ, վարուելակերպդ կը քաղցրանայ, խօսելակերպդ կանուշանայ, կենցաղդ կը հաճոյանայ, կարգալէն փորդ կանօթենայ, պօռալէն կոկորդդ կը պայթի ու հոգիդ կը վերանայ:

— Իբր տիրացու ի՞նչ գաղափար ունիք եռաձայնին վրայ:

— Պիտի խնդրեմ որ այս հարցումը մօտանցնելէն վերջը ընէք, ու վստահ եղիք թէ այն ատեն ալ արդէն այս հարցման պատասխանին պէտք պիտի չունենաք:

Յարգանքով լի մեծարանքով
ԵՐԽՈՒ

Դպրոցական պատանիի մը ատաւօտները ուշ հասնելուն համար Տնօրէնը խիստ նամակ մը կը գրէ ծնողքին, ազդարարելով որ ստիպեն պատանիին ատենին գտնուիլ վարժարան:

Հայրը շատ մը փորձերէ վերջ, միակ միջոցը կը դատէ Զէնիթ՝ ժամայոյց մը գնել տղուն, որպէս զի վայրկեանը վայրկեան կարենայ վարժարանին բացման ներկայ գլուխուիլ:

ԳԵՍԱՐԻՎՐՈՒՄԵՐ

[ՖԱՆԹԶԻ]

Յ. Ալփարին

Jardinին մէջ par hasard հանդիպեցայ ուր գար ծուռ ,
Բարակ մուսին պլուզ մը , սեւ ծիւքով մը նուրբ Ֆուլան
A l'anglais նոր պօքերով , գուլպաներ մը nrf à jour
Նոյն իսկ sofpkonն պիտի րուր préparé selon l'art !

Բարձր հասակին pas à dire . մէջք բարակ զերդ քաղար ,
Կուրծք հարուս naturelle , զոյգ chassներ բամպակե ,
Որոնց վրայ ասեղ մը , զետեղելու պիտի դողար ...
Նոյն իսկ իրեն մամիկը ... mais les jeunes gens en paquets :

Արափի մը չէր անի , քանզի չունէր մեծ ոտներ
Ոչ ալ Մարիամ մ'ըներ ան , les mains comme des champignons
Աղանի մը ... ոչ երբեք , մարմինը չէր մազոս գեր ...
Բայց Ալիս մը ... oh ! peut-être , եւ կամ Մարի մը mignonne :

Ճոխ ondulé մազին ասկի աչքեր մը վառ մեղաւոր
Որոնց մէջը ո' գիտէ ովեր կային amoureux
Գերեզմաններ են անոնք , սիրս մաւե տղոց բիրաւոր
Որոնց համար չի խղճար ... այնքան խիղճն ամուր է :

Նայուածքը սուր ու շանքող , ժպիտն անուռ attirant ,
Ակուաները փղոսկրե , քրքներ կեռաս գունաւոր ,
Պասնառ կըլլան որ յաճախ եղբարք ըլլան վաւ տիրան
Իմքս , փուկին յոյսերով , խոցին արտերն վիրաւոր :

Բայց որո՞ւնն է այդ հուրին , հետք չունի cavalier
Ձերդ գառնուկ մը մոլորեալ , կարծես հեռու իր հոտն
Եկած է՝ հոգ փնտռել մէկը արտին alier
Ու մայելով մէ՛ մէ՛ մէ՛ շահագործել շատ մօտէն :

Աւանակը՝ սա տղան տեղեն կ'ելլայ շապաւ ,
Գաւազանը նոնելով կը հետեւի nez au vent
Ձեւերովը կը մասնէ քե աչքն անոր ... ալ փակաւ ...
Ի՛նչ ապոււններ կսեղծէ , երբեմն մեր Եհովան :

Օրիորդն հիմա նստած է սեղանին մօտ à son aise
Շամբանիայի գաւաթներ կը պարպուին յաջորդիւ ,
Տղան արբէի կը յարէ գտնելով լայն ասպարեզ
— Հոգիս Օրիորդ ձեր adresse ...

— ... ձիւնի փողոց տար քիւ ... :

Ա Ի Ա Ա

ԱՆՏԱՐՔԵՐՆԵՐԸ

ՏԱՆԱԵԱՆ՝ 50 սարու . նստած է եւ վաթսուցեաց երկու բաժնի ծխախոտէ սիկառ կը պահաւարէ , մօտը նստած է՝

ԱՅՐԻ ՏԻԿ . ՄԱՆՆԻԿ՝ 40 սարու , որ իր հանգուցեալ ամուսինին յաջորդը կարգած է Տանաեանը չորս սարինքէ ի վեր :

ՕՐ . ՍՕՖԻ՝ 20 սարու , Տիկ . Մաննիկի հոգեզաւակը եւ Տանաեանի երակներուն քարմ արիւն ներարկողը : Սօֆի ամուսնացած ալ է , սակայն ամուսինին ֆոլէն փախած է եւ Տանաեանին յանձնուած , անոր ֆակը ծծելու մտադրութեամբ :

Տանաեան . — Նորէն մահալէին մէջը անուշիս կը պըտըտի կոր , նորէն երէք ամիս առաջուան պէս մեղի կը բամբասեն կոր ...

Օր . Սօֆի . — Պըտըտի նէ որու հոգ , բամբասեն նէ որու հոգ ...

Տանա . — Գիտե՛ս որ հոգ կընեմ աղջիկըս ... չէ՛ սախըն հա՛ , բէք կը նայիմ որ բամբասանքները շատցան մի , կսկսիմ պարտէզին դուռնէն մտնել ելնել , թող ալ ա՛նոնք ինչ կուզեն ըսեն ...

Տիկ . Մաննիկ . — Կը վայլէ կոր ես առ ըսածներդ ...

Տանա . — Չվայլելիք ինչ կայ որ , քա՛ ես փարայ ունիմ փարայ ...

Օր . Սօֆի . — (Տանաեանի ֆոլը մօտեցալով) Ինծի ամառուան գլխարկ մը պիտի առնէիր ...

Տանա . — Հա՛ , փարայի ձայն առիր տէ ոտքի ելար հէ՛ ... հա՛ , հասկնան թող քի ես փարա ունիմ , իրենց պէս քսան փարայի զէթին , յիսուն տիրէմ եղ չեմ առներ ...

Օր . Սօֆի . — Եաղ ըսիր տէ , թէրէ եաղի ուտելով ա՛լ զանեցայ ...

Տանա . — Է՛յ խայմախ կեր ...

Օր . Սօֆի . — Անկից ալ զանեցայ ...

Տիկ . Մաննիկ . — (Ինքնիքեց) Կողոս ու տէք հէմէն ...

Օր . Սօֆի . — Ականջ տուէք նորէն մեղի կը խօսին կոր (կամաց մը պահուհանը կը բանայ եւ մտիկ կ'ընէ) Բա՛ , նորէն մեղի կազէթան անցուցեր են , այս օրուանին մէջն է եղեր ...

Տիկ . Մաննիկ . — (Ձեռները իրար բերելով) Վո՛ւյ , նորէն պատիւնիս փարայի մը պիտի ըլլայ ...

Տանա . — Ես փարայ ունիմ փարայ ... Այսօրուան առ զազէթան առնենք , մուծլախ թօհաֆ բան մը գրած ըլլալու են . կարդանք տէ քահ քահ խնդանք ...

Օր . Սօֆի . — Հա՛ , հա՛ , հա՛ , ես հիմակ ուրնէ կը խնդամ կոր ...

Տիկ . Մաննիկ . — Չաթը երկուքնուդ ալ քովը նամուս ըսուած բանէն փոքր մը օլտուն չիգայ քի ...

(Լրագրավաճառի մը ձայնը կը լսուի) :

Տանա . — Գնա՛ , գնա՛ , Սօֆի , նա՛ տասը փարա , լրագիր մը առ : (Սօֆի կերթալ եւ լրագիրը առնելով կը վերադառնայ) :

Օր . Սօֆի . — Հա՛ , հա՛ , հա՛ , տող մը կարդացի ե պիտի մարիմ խնդալէ ...

Տիկ . Մաննիկ . — (Ինքնիքեց) Մարիկ մարիկ գաս հէմէն , քա լալու տեղ կը խնդան կոր , ա՛խ ես ձեռքովս ըրի , ձեռքովս ըրի , հիմակ ալ քաշելու եմ :

Տանա . — (Կառնէ լրագիրը եւ կը կարդայ) Է՛յ , կարծէ եղեր տասը փարա տալը , է՛յ , հա՛ , հա՛ , հա՛ , բէք թօհաֆ գրեր են :

Օր . Սօֆի . — (Տանաեանին ետեւէն քերք կարդալով) Հա՛ , հա՛ , հա՛ , կարծես թէ ճիշտ եղածին պէս գրեր են ...

Տանա . — Բանի փարա կընէ քա , ես փարա՛ ունիմ փարա՛ ... հէմ առնք ամէնքը վաղը կը մոռցուին ...

Օր . Սօֆի . — Ինծի ամառուան գլխարկ մը չէնէ երկանս քով կերթամ ...

Տանա . — Կ'առնեմ ... կ'առնեմ ... (Տիկին Մաննիկի դառնալով) Ըռաֆցու թուղթ առ կ'ըսէիր կոր , նա՛ , սա կազէթան գործը կը տեսնայ ... :

Վ . ԳԵՐԸԳՅԱՆ

ԶՂԶԻԿԻՆ ՏՈՏԻԿԸ

[ԿԱԽԱՐԴԱԿԱՆ]

Ամէն հիւանդութիւն իր միջրոպն ունի կ'ըսեն այսօր, փորի սանձիւ քէթէն թօխու մի լափայ թէրթիպ տուողէն մինչեւ լաւսացում sp սիսեհամի գործածութիւնը արտօնող բժիշկները, անշուշտ իրենք ալ իրենց վարպետներէն առած մեզի ծախելով, սակայն չեմ գիտեր թէ ածելէ թէրթիպ աղջիկ կարգելու փափաքը տաժող կարգ մը մայրերու ջղային այս գրգիռն ալ իր միջրոպը ունի՞ . . . :

Ինձ այնպէս կ'երեւի որ եթէ ընտելութիւնը ամէն կարգուողի անդրանիկ զաւակը Անդրանիկ մը չի ծնի և այսպէսով աղջիկները ծնիքիս պիտի գուրուշա չիրողի պէս տիգի տիգի փողոցները ողողեն, այն ատեն պէտք է որ ամէն աղջիկ ունեցող հայր տունին վերայ թապէլա մը դնէ սա վերտառութեամբ. « Ի՛հռամիյի մաւսմագիլիքիմիզ սա վար » : Կեցէք, դեռ մի խնդաք, ինչո՞ւ կը զարմանաք, քանի որ օրէ օր չէջիտը աւելցող շաբաթաթերթերնիս քշուելու համար մէկ մէկ քռիւք կը մտածեն, և իրարու ձեռքէ միշտ ապօնքման և կամ ընթերցող խելու ամէն ջանք ի գործ կը դնեն, ինչո՞ւ ծնողք ալ իրենց հոգեհատորը ձեռքէ հանելու համար առաւելութիւններ չի յղանան, քռիւքներ չի մտածեն և հնարքներ չի խորհին . . . :

Բայց կատակը մէկդի, ցաւալի է յիշել հոս կարգ մը դերուս ծնողքներու արարքը, որոնք աղջիկ կարգելու համար ամէն ինչ կ'ընեն կ'ըլլան և որ աւելին է, նոյն իսկ կախարդութեան կը դիմեն, դրամ ալ կը վատնեն, սակայն նորէն իրենց աղջիկը տունը կը փառնայ, ոչ թէ միայն Դեկտեմբերին այլ Օգոստոսին ալ, և այսպէս շարունակաբար :

Թէեւ ամբան այս տաքերուն դժուար է ձեզ թերթ կարդալ, սակայն զուարթ ու քրքշալիք յետագայ պատմութեանքը բացառա-

բար պիտի կրնայ կարծեմ այդ ձանձրոյթը փրկել :

* * *

Աղջկանը՝ Ուսկուկին մէջի շապիկը Պատարագուորին ոտքին տակ դնելէն ալ օգուտ չի տեսնող տիկին Ագապի, ասոր անոր ստիպման վրայ ուղղակի կը դիմէ հանրածանօթ գուլու-պագան Մարեէնէին, որպէս զի իր փափաքը իրագործուի :

Առաւօտ մը կանուխ, դեռ արեւը չի ծագած, տունէն դուրս կելլայ տիկին Ագապի և շունչը կառնէ շիտակ կախարդին տունը :

Քառակուսի սենեակ մը, չոր չոր պատերով, հին կտաւ վարագոյրներ, հինօրէնք սէտիր մը պատմա ծածկոցով, երկու խլիլիկ աթոռներ հոս հոն, աղտոտ սեղան մը վրան, մէջը մատ կապած չիշ մը ջուր և գաւաթ մը, քովը կերակուրի աղտոտ սփակներ : Անկիւնը սեփրին վրայ կծկուած սեւուլիկ ճառը մը, սեւ խաբաթմայով, ձեռքը համբիշ մը, ոտքերը բուրդ գուլպաներ, որոնց ծարերէն մեծ մատերը թօսպաղիի գլխու պէս դուրս ինկած :

Տիկին Ագապիի դուռը զարնելովը ներսէն չուվանը կը քաշուի և դուռը կրկին գոցուելով միամիտ յաճախորդուհին վեր կ'ելլայ :

— Բարի իրինկուն մարիկս, առտու է ամա, վախցայ քի շատ իրիճածի կուսննաս տէ տեղն ի տեղոքը չեմ կրնար տէրտս պանար տէյի, ըսելով քովը կը նստի :

— Էյ Ասծու բարին, բարի եկար ա՛մա, խայիպ է նէ չեմ նայիր, թէօպէլի եմ կըսէ Մարեէնէ օրը յաջող ըսկսելուն գոհունակ դէմք մը շինելով, ի՞նչ է ան նայիմ ըսէ, ու կսկսի համբիշը շուտ շուտ քաշել, ատեն ատեն ալ սենեկին պուճախը նայելով :

— Քա չէ՛ . . . թօբլումը պլիէ խայիպ չունիմ, տէրտս պաշխա է պաշխա, մարիկս, քէշկէ խայիպ ըլլար . . .

— Ես ալ աս առտու քիչ մը եաղլըն արթնցայ ամա նէ իսէ զուրցէ նայիմ ...

— Աղջիկս կայ Ուսկուհիցաս, թըֆըլ տա-
րիքէն կարգելու ելայ, աս օր խօսքը քովդ
մնայ էռտունը աթլամիշ ըրաւ տահա գըզ
օղլան գըզ մնացեր է, իշտէ անոր բարի խըս-
մէթ մը կայ տէ աշողցունեմ տէյի ելեր ոտ-
քերդ եկեր եմ մարիկս, դուն գիտես ...
ըսելով գրպանէն թաշկինակը կը հանէ և աշ-
քերը կը խխմէ:

— Էյ աղէկ ամա, տէլիխանլըն հազըր է...

— Մենք մեզի հազըրեր ենք ամա, տը-
ղան հիշ անտեղունքը չէ, աղջիկս ըսես նէ
գիշեր ցերեկ ախով վախով ինքիզինքին է-
ճէլը պիտի մտնայ, ան Սէրգիսս ըսած վախ-
տը լեռները ինլէմիշ կընեն կոր, իմ ալ ճի-
յէրներս խըյմա կը կտրին կոր ... դուն գի-
տես աս գործը քենէ զատ մէկուն ընելիքը
չէ ...

— Կայնէ եավրում, թէլաշ մընէր, ի՞նչ
հարցունելու ըլլամ նէ անոր մինակ ճուղապ
պիտի տաս, պաշխա էվէլ պակաս իլավէներ
դուրցածիդ կիպի, գործը ալլախ պուլլախ
կըլլայ ...

— Ծըռիմ ոտքդ պագնեմ, ըսել է քի
կըլլայ ...

— Էհ, ես պիտի ճահտ ընեմ, աղջիկանդ
բազղն ալ եարտըմ ընէ նէ կըլլայ, հիմա
դուն ինծի ըսէ նայիմ, աղջկանդ անունը
ի՞նչ է ...

— Ուսկուհիցա ...

— Քանի տարու է ...

— Եռտունը մատ մը անցուկ է ամա,
մանտրուք է տէ չի ցուցներ ...

— Ո՞ր ամիսին պերած ես ...

— Կիտնալս ձմեռ էր քի էրիկս լուսահո-
գին բիլաւի պէս մանդալները կը չընէր տէ
դէմա նստող տահեկը կէնէ հօ՛ հօ՛ ընելով
ծառքերը կը տաքցունէր կոր ...

— Ըսել է քի ամիսը չիյտես կոր, բէք
աղէկ, Ուսկուհիցային պառկած օտան լօտօս-
լուխ է չէնէ մի բօրեաղլըն ...

— Կիւնտօղուսի է գիտնալս ամա, բօր-
եազէն ալ պզտիկ աշըխըն մը ունի ...

— Գիշերները սօյի՞ն կը պառկի չէնէ սա-
ղին ...

— Տիխաթ չեմ ըրեր ամա, գիտնալս սա-

ղին կը պառկի քի, սուռաթը բէնճիրէին ըլ-
լայ, տղուն անցած սօխախին թառաֆը, աշկս
ելլայ ...

— Բէք աղէկ ... ամիսը քանի հեղ չա-
մաշիր կը փոխէ ...

— Արդեւ կայ տէ անուշ ջուր ունենանք
նէ, սըլս սըլս չամաշիր կընենք, ան ալ սըլս
սըլս կը փոխուի, չէնէ խուռախ երթայ նէ
ամօթ է ըսելս, պազի քսան օրը կանցնի ...

— Տուներնիդ խօռոզ ունի՞ք ...

— Մենք չունինք ամա, էկէր պէտք է
նէ ներոջմէս կուզեմ ...

— Ուսկուհիցային կէօքսին սա սապօն-
լուխները լեցուն են չէնէ մի չուխուռ ...

— Ը՞նչ ... միսը մնաց քի եավրուի՞ս ...
հալեցաւ հալեցաւ հալկիթի խապուխ դառ-
ցած է հիմա ...

— Տուներնուդ էքմէքճին սառըլ՞ վրայ
է չէնէ մի էսմէր ...

— Եռմուռճախը տանի, բարայի համար
կուլ ըրած վախտը սիմ սիեան կը կտրի կոր,
դուրսն ալ տեսած չունիմ քի նալլէթը ...

— Աշին մէօհիւրը սա՞ղն է մի սօլը ...

— Կեցիւր նայիմ ... հա՛ սաղն է սաղը ...

— Ատ տէլիխանլը ըսածդ հաշարի է չէնէ
մի տուռղուն ...

— Քա չէ՞ ... Թիւլի պէս հէմ տէ խուռ-
չինի պէս ծանրը կլոխ ...

— Քանի տարու կայ ...

— Աղջկան պէս թիւլսիւզ, էհ սանկ քը-
սան քսանը մէկ չիկայ պիլէ պէլքի ...

— Էսմէր է՞ մի խումուալ:

— Էսմէր չիթիլի, կրակ է կրակ ... պի-
պէ՞ն ... ախ փեսա՛ս ...

— Գործը ի՞նչ է ...

— Թիւճարի եազըճի, ամա հաթիմ պի-
թիմ պան, անխըտար քի չօրպաճին խախլէն
պիլէ անոր ապսպրել կուտայ եղեր ...

— Զայիֆ է՞ մի չիչման ...

— Ա՛խ ... խաշի իւլիւֆէրի պէս միսոտ
տէ ...

— Հասկցայ, աստարը ինծի հէրիք է,
հիմա ինչ ըսեմ ինչ ընեմ նէ քովդ պիտի մը-
նայ, անանկ դուռ դրացի նախ ընեմ ըսես
նէ կաւրուի, հետս եկուր նայիմ, ըսելով
վար կը տանի իր յաճախորդունին:

— Քա չէ՞ ... բիսիկիս պիլէ ինամ չու-

նիմ, դուռն հոգ մընէր մարիկս, ամա վրասս սոսկում կուգայ կոր կըսէ Ագապի, երբ ինքզնիքը կը գտնէ մութ մաղաղայի մը մէջ, ուր պլպլած կանթեղ մը կը կինար:

— Ինծի նայէ աղջիկս, սըտեղ հօր մը կայ նայէ ...

— Հա կը տեսնամ կոր ...

— Հիմա ատ հօրին խափախը պիտի պանամ, մէջը պիտի նայիս, ամա աղէկ տիխաթ ըրէ, նայէ քի ան ըսած տէլիխանըդ է, տակէն անցնողը ...

— Տող կեղւամ կոր մարիկս, վրասս փուշ փուշ կըլլայ կոր ...

— Աղջիկս, աս զէնահաթը հետս պիտի տանիմ, ինէ պաշխա Մարեէնէ չիգայ, ամա լայնէ քի ըսեմ, մէջը նայելուդ պէս « էյ սէվկիւլիւ կիւլէրճինիմ, իշտէ կէլտիմ օճաղընա, սէնտէ պանա մէրհամէթ էթ, գալք տա թէգ կէլ գուճաղըմա » տէյի երեք անգամ պիտի դուրցես ...

— Բէք աղէկ ամա, սուր բէշդ պոնեմ, դող կեղւամ կոր, չէնեէներս իրարու կը դարնուին կոր ...

— Հա' ... էյէր պիտի վախնասս նէ չեղաւ ... չէ' ... սիրող ամուր պիտի պըռնես ես վրում, եսպանճի չէ' ես, վաղը մէկալնօր փեսադ պիտի ըլլայ ...

— Էյ բէք աղէկ, զօրքիդ մեռնիմ Ս. Աստուածս, ըսելով կամաց մը բաց կափաբիլէն վար դէպի հօրին յատակը կը նայի ու կսկսի կրկնել, կախարդին ըսած խօսքերը:

Վարէն ճերմակներ հագած ստուեր մը կանցնի, որուն ի տես տիկին Ագապի, կսկսի պոռալ,

— Վախ ես վրում ... կէշկէ ես սատկէի տէ չի տեսնայի, քա մարիկս, աղէկ ամա, մեռեր է փեսաս տէ պանտանքով տեսայ, վախ ես վրում ...

— Ան պատանք չէ աղջիկս, ինքզինքիդ եկուր, ես անանկ հրաման ըրի քի, ճերմակները փաթթուի տէ անանկ երեւայ քի գործին ըլլալիքը պէլի ըլլայ, սեւ հագներ նէ չպիտի տեսնայիր, նամուսս, զէնահաթս ալ փարայի մը պիտի ըլլար ... հիմա տեսար ես, վեր եկուր քի իլաճ թարիֆ պիտի ընեմ ըսելով երկուքը մէկ վերի սենեակը կելան կրկին, ուր կսկսի դեղազերը բացատրել:

— Հիմա ինծի նայէ, կըսէ վհուկը քովը գտնուած պզտիկ սնտուկ մը բանալով, նայէ ասիկայ կէճէ խուշիի տոտոնը իլէն կլոխն է, ասիկայ պիտի առնես, մալի կաղ պօյսմասիին մէջը դնես, Ուսկուհիցային պօրտին պիտի կապես երեք օր չօրս դիշեր, անկէ ետքը հանէս սեւ սօխախի շուշի մը պօչին տիպի թիւշէն կարես մանկալին վրայ թիւթսիւ տաս պիտի, աս տոտոնները իլէն խանառներն ալ վրան պիտի բռնես, սողրամտան քէշիի եսվուտ մը պիտի գտնաս, մօրը քովը կաթ կերած վախտը պօչիլը կերերցունէ' ես, իշտէ թամ ատ վախիթը երթաս պէրնի սօն տամա կաթը ասոնց վրան պիտի տամ լաթմիշ ընես, ետքէն երեք գիշեր կէս լուսինին Ուսկուհիցային պառկած օտային բէնճիրէին մէջը այաղին պիտի դնես, տէօրտիւնճիւ օրը լէօպով մը մանչուն ճէպը պիտի դնես, եսխօտ դնել տաս: Աս իլաճս ըրէ, էկէր ութ օրէն տղան չիգայ բարասը փուլըդ չըպչըպալի աղջիկդ չուգէ հետը չի կարգուի նէ ինծի եուֆ ըսէ ...

— Վուշ ոտքդ ծառքդ պազնեմ մարիկս, իրաւ է աճապ ...

— Ճանըմ, քեզի ծովը նետուէ չեմ ըսեր կոր ես, չօգ չէյ, աստաը ճահտ էս ըրեր իմ ըսածս ալ բոօվա մը ըրէ, տալիքդ ինչ է քի ...

— Հա' նայէ խելքս գլոխս չի մնաց քի ... ինչ պիտի տամ ...

— Ես անանկ պաշխասիներուն պէս թութխունճիութիւն չունիմ, երեք ճերմակ պիտի տաս, ետքէն հարկերնիդ ըլլալու ըլլա'յ նէ, ան վախտը սիրտէդ ինչ կը փրթի նէ կուտաս ...

Տիկին Ագապի բէշը վեր կառնէ և երեք մէճիտը կը հանէ կուտայ և անոնց տեղ կը զետեղէ ջղջիկի տոտոնները . . . !

* * *

Տուն դարձին, միամիտ մայրը աղջկանը վիզը նետուելով,

— Հայտէ աղջիկս ճերմակներդ պաշխասինք, գործդ սըրային է, ախ ... ինծի պէս մար մը ուր պիտի գտնաս նայիմ ... իշտէ սա պտըտիկ չըխնով ան տղան քուկդ պիտի ընեմ ...

— Աման մայրիկ, գետնէն էլմասի չըխն
գտար ինչ եղաւ ...

— Էլմասը քանի փարայ կընէ ... կէճէ
խուշի տոտոխ է տոտոխ ... ամա ինչ ը-
նեմ նէ չպիտի խօսիս ... քա տեսնաս, Սէր-
գիսիկը հորին մէջէն ձերմակներ հագած տի-
պէս չասնի՞ մի՛ ...

— Վույ մըսեր մայրիկ ...

— Իա հա խաչոր, աս աչքերովս տեսայ...

— Եաղլը չըլլաս մայրիկ ...

— Մեղայ, Սերգիսիկը չեմ ճաշնար,
տիւզճէ ան էր, պըլըխները սիրեմ, անանկ
ալ վեր վեր ըրեր էր քի ...

— Էյ նասըլ պիտի ընենք ... կըսէ օրի-
որդը դող ելած ...

— Դուն ինծի ձգէ, թախըմ մը բաներ
կայ ըլլալիք, անոնք ընենք անկէ ետքը ես
գիտեմ ընելիքս ... Ըսելով խեղճ ու միա-
միտ մայրը գործի կսկսի:

* * *

Ջատուկ վհուկին պատուիրածները կէտ
առ կէտ գործադրելէ վերջ երբ կարգը կու-
գայ ջղջիկին տոտոխը Սերգիսիկի դրպանը
ձգելու է՛ն կարեւոր մասը, ոչխարամիտ մայ-
րը առաւօտ մը կանուխ փողոց կիցնայ և
կսկսի չորս դիէն մարդ ճարել, որպէս զի
վերջին դեղագիրը պատրաստել տայ: Զի
մոռնամ ըսելու որ այդ փողոցը տղուն անց-
քըն էր, ուրկէ առաւօտները գործի կերթար
ան:

— Ծօ՛ հոս եկուր, կըսէ դպրոցականի
մը, քեզի տասնոց մը տամ տէ բան մը ըսեմ
նէ կընեմ ...

— Ըսէ նայիմ, բաղնիքի պօխճա է նէ
չեմ տանիր ...

— Չէ ծօ՛, հիմա հոս քովս պիտի կենաս,
տղա մը պիտի ասնի, սա պտըտիկ չըխնը
ուսուցով մը անոր ճէպը պիտի ձգես ...

— Կը ձգեմ, աս ալ բա՛ն մըն է ...
տուր նայիմ ... կըսէ տղան ...

— Նա՛, առ ամա մի բանար, հեռուն
սանկ կեցիր, հիմա ուր է նէ պիտի ասնի,
ես հեռուէն քեզի աչկ կընեմ, դուն հէմէն
ետեւէն կերթաս կը ձգես, հէմ տասը փարայ
հէմ ալ երդընով ուշուրմայի սիճիմ պիտի
տամ, քեզ տեսնամ ... կըսէ տղեկին և այդ

եռմախը ձեռքը տալով ինքը անկիւն մը կը
կծկտի:

Բառորդ ժամ վերջ, Սարգիս ըսուած
բանիսան որ եղելութենէն լուր չունէր, բառ-
տըսիւն ձեռքը գաւազանը ճոճելով տունէն
կելլայ և կսկսի ճամբան շարունակել: Տղան
աչքերը չորս բացած չորս դիէն կը նայի, յան-
կարծ տիկին Ագապի աչքով կը հասկցնէ տը-
ղուն որ անցնող երիտասարդն է խնդրոյ
նիւթը:

—

Տղան խնդալով խաղալով երիտասարդին
վրայ վազելով,

— Նա՛, ախպարիկ, սա չըխնը ձեպդ
պիտի ձգեմ եղեր, նա՛ սա կընիկը տուաւ ...
Ըսելով իր եղբորը կը յանձնէ, մինչ տիկին
Ագապի, մարմերու վրայ հազիւ կրնայ կը-
ծիկը դնել:

— Ծօ՛ հոս եկուր Լեւոն, կըսէ միւսիւ
Սարգիս, պզտիկ եղբորը օճիկէն բռնելով,
ինչ է աս ծօ՛, ո՞վ տուաւ ...

— Ես ինչ գիտնամ աղբարիկ, կնկանը
մէկը, նա հիմա հոս էր, ըսաւ քի աս տեղէն
միւսիւ մը պիտի անցնի, անոր ճէպը դնես
նէ քեզի ուշուրմայի սիճիմ կուտամ տէյի,
ես ալ ...

Երիտասարդը շտապաւ կը բանայ ծրարիկը
և մէջինին վերահասու ըլլալէ վերջ, չի կըր-
նալով մեկնութիւն մը տալ ինքն իրեն, ետ
կը դառնայ ու մօրկանը կը ցուցնէ, որոնք
ալ Լեւի փորձառու կը հասկնան եղելու-
թիւնը:

* * *

Վերջաբան. — Ջղջիկի մը տոտոխը չէ
որ ձեր աղջիկները յարմար տեղեր հարս կ'ընէ,
պէտք է փեսան աղաչելով գայ օրիորդը
հարցնէ: Նա որ չունի առողջ միտք մը դը-
լուխը, ու կը փորձէ ջղջիկներու տոտոխը,
չատ չի քշեր կըլլայ շատին ոտխը, վերջն
անյաշնող՝ նստի կըծէ չոր սոխը, թէ ինչ կըսէ
զասոնք ձեզի խօսողը, ախանջ տուէք՝ ա-
սոնք ըլլան ձեր օղը:

ԼԵՒԱ

ԿԵՍ ՄՆԱՑԱԾ ՀԱՄԲՈՅՐԸ

Երեկոյթի մը հրաւիրուած էի: Չերթալու պատճառ մը չունէի երբէք՝ քանի որ պարտապահանջներս չէին որ զիս կը հրաւիրէին:

Իրիկուան ժամը տասն էր երբ գացի սափաքիչիս, խնդրելով որ լաւ մը զիս ածիլէ, այն յոյսով թէ՛ կարենամ գուցէ շատ մը պայլըն աշուկը հուրիններու նայուածքը վրաս սեւեւել տալ:

Ածիլուելէ վերջ տուն կ'երթամ հագուելաբանութեան սկսելու համար: Կունակ կ'անցունեմ անբաժան ընկերս և հինգ տարուան բոլոր արդուզարդիս հերոսը եղող ռէսէնկօթս, որ շատոնց արդէն նոր ըլլալէ հրաժարած է: Ոտքիս կ'անցնեմ լուսքիմ կօշիկներս, որոնց քովէն դուռած կարկտանները չափ ու սահման չունին և որոնց նորոգման համար մօտ օրէն նուագահանդէս մը պիտի սարքեմ: Քըրոջս օղը փողկապիս ասեղ կը շինեմ, մօրս ալիքան մասնին մատս կ'անցնեմ և կը պատրաստուիմ երթալ:

Կ'որոշեմ անձնական պիսիքէթովս (ոտքերովս) երթալ, որոնք լծուած՝ ինձ կսպասէին, քանի որ միտք չունէի գրպանիս բոլոր հարստութիւնը եղող 5 դահեկանը կառքի տալու:

Քիչ ատենէն կը հասնիմ Բանկալթի խաւովուանոզ (նոր բառ) փողոց, այն տունը՝ ուր երեկոյթը սարքուած էր: Դուռնէն զիս կ'ընդունին զոյգ մը սեւ պոչաւոր կառսօններ: Տան տէրը զիս կ'ողջունէ մեծաւ խոնարհութեամբ, տիկինը յարգանք կը բարեւէ, իսկ օրիորդը փոքրապատուութիւնս տեսնելով կը շուարի կը մնայ:

Հինգ վայրկեանէն արդէն Տիար Զ. Սօխուտողեանին սենեակը բազմած էի: Հոն էին Բերայի քիթիփիոսները, ճէպի-տէլիք զիւպէշները, կուտերը (ըստ ոմն բարեկամունիս), գեղեցիկի համբաւ վայելող և ալ պէնիի հովեր ծախող աղջիկները, և մայրիկ «էրիկ կուզեմ» ճիւղերու մեծամասնութիւնը:

Սօխուտողեաններուն սենեակը լոյսերու մէջ կը շողար, աղջիկները արեգակի նման կը փայլէին իրենց քսած բոլսրային և սեփօթեթուալթի չնորհիւ:

Բոլքա, մագուրքա, քատրիլ, իրարու կը յաջորդէին, երկու սեւի ներկայացուցիչները

իրար կը սեղմէին, Ագամի թոռները լաւ մը կը վայելէին Եւայի թոռները, ինչ ախորժակով որ պիտի ճաշակէին իզմիտի սերը: Եւ մի զարմանաք երբ ըսեմ թէ՛ այսքան տամաներու առատութեան մէջ դեռ հատ մը անգամ չէի կրցած ձեռք անցնել: Երկար դեգերումներէ, տանը բոլոր անկիւնները պըրպըրելէ վերջ, տամա մը գտայ:

Վերջապէս ... ո՛հ, ինչ բաղդ կը մտածեմ, վերջապէս գտայ սրտիս սիրածը, հաւնածը, հոգիիս պաշտածը, միտքիս ուզածը:

Կարմիր այտերով, թափթիած մաղերով, չիմեն յօնքերով, ցանկապատ ալուաներով, երկայն վիզով, գոմէշակուրծք, շփացած դերձակուհիի աշկերտ մ'էր:

Երեկոյթին է՛ն տաք միջոցին խնդրեցի սիրուհիէս որ բարեհաճի հետս սենեակ մը առանձնանալ, գէթ պահ մը հոն ըմբոշխնելու համար մեր այսչափ ժամանակուան սէրը, չմերժեց:

Բաւական տաք խօսակցութեան մը բըռնուած էինք, խօսակցութիւն մը՝ որ համակ սէր կը բուրդէր, և որու միջոցին սոսկ նշանտուքի և ամուսնութեան վրայ կ'ոռոճայինք:

Վերջ տալու համար մեր այս տաղտկալի խօսակցութեան և չարդուկելու համար ձեր պատուարժան գլուխները, (որ իմ դուռմ գլուխիս չեն նմանիր), ինձ հանգէպ տածած սիրոյն իբր ապացոյց, համբոյր մը ուղեցի այն այտերէն՝ որոնց համար ամիսներ երազած, անքուն գիշերներ անցուցած և չորս անգամ անձնասպան ըլլալ որոշած եմ, ինքզինքս մեր տան սառնիճը նետելով՝ որուն մէջ հազիւ կէս մէթր ջուր կայ:

Բերանս իր այտին կպցնելուս, փոխանակ անուշ և զգլխիչ համ մը զգալու՝ բերանս կը թթուանայ, հուր ու մոլի կսկսի պոռթկալ բերնէս ու հազիւ լուցկի մը վառելով հայելիին կը մօտենամ ... Ինչ տեսնեմ աղէկ ... բերանս փրէն օնաղի դարձած էր օրիորդին դէմքին աղբեցութենէն:

Բայց ինչ որ է կը մտածեմ քանի որ առիթը ձեռք անցուցած եմ պէտք է օգտուիլ: Եւ երբ կը պատրաստուիմ միւս այսն ալ ... և ահա սենեակին դուռը կը բացուի և զմեզ կը գտնենք օրիորդին հօր հետ դէմ առ դէմ, որ իւրեկեք է եղեր ...: Տուն մը չինելու ուրիշ ինչ պէտք կար. կիր և կին մ'ալ համակիր:

ՎԻՈՒԼԵԹ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԿԱ. — Ինքիներն բժիշկի հովեր փչող և արհեստով նուագածու ուսի խելացի դաւիթ մը, տան դրան վրայ խոշոր բլաֆ մը կը դնէ։ Անցեալ գիշեր դրացիներէն կին մը հիւանդանալով երբ այդ բլաֆէն խափուելով հիւանդին տէրը տան դուռը ձեռք կառնէ, ուսին՝ գիշերնոցով պատուհանէն կը ձայնէ «ես տօքթօն չեմ, լավութայի պէտք ունիք նէ գամ»։

ԽԱՍ-ԳԻՒԴ. — Տեղոյս երկայն թաթիկ ու թացիկ մանկավարժուհին, որուն համար *le briut cours que* թաղականի մը պաշտպանութիւնը կը վայելէ, անցեալ օր դարձեալ կրկնեց հետաքրքիր տղեկի մը վրայ իր սովորած փորիկ ոչ-ֆրէօպէլեան փորձերը, որոնց համար Պատ. Թաղ. Խորհրդոյ ուշն ու ուրուշը կը հրաւիրենք։ (Մենք ալ Ուսումնական Խորհուրդին ուշադրութիւնը տալէթ կընենք. Ծ. Խ.)։

ՆՈՅՆ. — Տեղական թերթի մը խմբագրականէն ազդուելով տեղոյս Ներսէսեան վարժարանի պարտէզին պատին շինութիւնը դադրեցաւ։ Կիմանանք թէ խմբագիր-տնօրէնը ինքն իր քսակէն պիտի շարունակէ այդ շինութիւնը։ (Այս լուրը մեր Ապրիլ 1ի թիւին աւելի պիտի յարմարէր. Ծ. Խ.)։

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Տեղոյս միակ պանդոկապետը Յովակիմ աղա, ի հանգիստ և ի դիւրութիւն իր բաղմաթիւ յաճախորդաց, 140 հովանոցի և 140 զոյգ լաստիկ կալոյի սքօֆ մը բերել տուած է, որոնք պիտի արամադրուին

անձրեւ օրերուն սայլանկէօզի պէս պըտըալիլ ուզող հորպիլիպիմպոմներու։

ՆՈՅՆ. Անցեալ կիրակի, բուն Թաշ-տէլէնի ազրիւրին մօտ, դաւաթ մը ջուրը, տասն և հինգ տարի աղջիկ բնառողի մը ստամոքսէն աւելի յիւրաղ շինեց ու խօսք կապը տեղի ունեցաւ, ի ներկայութեան եօղուրտծի կիներու և զուռնաճիւղներու։ (Կը տեսնէք որ Թաշ-տէլէնի ջուրը մինակ խում չի քալեցնէր, աղջիկ ալ կը քալեցնէ. Ծ. Խ.)։

ԳՈՒՄ-ԴԱԲՈՒ. — Այստեղի եռաձայնի խումբին անդամները որոշեցին իրենց մէջ 10ական փարա հաւաքելով թերթի մը անկուսի խմբագրին տան, որպէս զի Ղալաթիոյ եռաձայնի անդամներուն դէմ գրէ։ (30 փարայ տուէք, որպէս զի 40նոց մը տամ։ Հօ՛ր, տասնոց մըն ալ ինձմէ ճապա։



ՄԻԱԿ ՓՈՐԱԳՐԻՉԸ

Որուն կրնա՞ յանձնարարել՝ շիմօրի, սօսախի վրայ Է՛ն նուրբ եւ Է՛ն կննոս ֆիլեներ, ինչպէս նաեւ ֆառք վիզիքի յատուկ նուփօք գիրերու փորագրութիւնը բոլորովին նորօրինակ եւ գեղարուեստական։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք փութով նշուրեամբ կը կատարուին։ Անգամ մը փորձելը բաւական է գաղափար մը կազմելու համար Տ. Շիրինեանի նաշակին, արուեստին եւ կարողութեան վրայ։

Հասցէ. — Պապը-Ալի նասսէսի բիւ 56։

Արսօնաքր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի նասսէսի բիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆԳՆԵՐԻ ԵՐԱՆՈՒՄ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ Եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բելլոթիներու
և տղայոց շիք և գիմացկուն ֆօքիւս-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Օտկարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—37



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷ՛Ք

ՓՈՒԹԱՅԷ՛Ք ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղալ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն գոհարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարֆային:

ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԵՆՔ ԹԷ

ՄԵՐ հրատարակութիւններէն

ՓՆԶԱԿ

Գ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

ԵՒ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆՁ

Անուն օգտուչատ դասագիրքերը

ՆՈՐԷ՛Ն ՏՊՈՒԵՑԱՆ

և կը վաճառուին սովորական գիներով
եւ թէ՛

Համառօտ Իրագիտութիւնն ալ

նորէն պիտի լոյս տեսնէ՝

Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած

Դիմել 47, Պապը-Ալի հասկսի

ՍՄԱՏ ԴԱՒԹԵԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆՍԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ չղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամկա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օժախ ելն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանքաց տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐԺԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ԴՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻԻ 13

50—26



ՐԵԻԵԼՔ

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական:

— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Զեռքէ վաճառում՝ տասը փառա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐՆԻՆԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամուալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խումբազրութեամբ և իր կարող աշխատակիցներով,

բոլոր, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՂԱՅԻՆ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնոթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսալիսութիւն մը կը կազմեն: